ՀՏԴ : 809.198.1

ՄԱՅՐԵՆԻՆ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ*

Բոլոր ժամանակներում լեզուն անվերապահորեն համարվել է ազգային գոյության հիմնական երաշխիքը: Մասնավորապես, հայոց լեզուն դարերով պետականություն չունեցած հայ ժողովրդի համար դարձել է մտքի ջահ, ձեռքի սուր ու հոգևոր վահան՝ օտարների ամենակուլ ոտնձգությունների դեմ:

Լեզուն ուսումնասիրվում է, նրա պահպանման ու զարգացման ուղիներ են նախանշվում, մշակվում են կիրառության ու գործադրման կանոններ, մաքրության հետ կապված խնդիրներ են լուծվում, սակայն այդ ամենը մտքի աշխատանք է, կարող ես հասկանալ ու գնահատել, բայց չզգալ և չընկալել նրա գեղեցկությունը: Մինչդեռ լեզվական բնական միջավայրում բանավոր հաղորդակցվելն ու միմյանց պարզապես լսելը ոչ միայն լեզվի արտահայտչականության ցուցադրում կարող է լինել, այլև միասնության հզոր լիցքեր պարունակել:

Այսպիսի նպատակ էր հետապնդում փետրվարի 21-ին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կայացած Մայրենիի օրվան նվիրված առցանց միջոցառումը, որին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՄՆ լեզվի կոմիտեի, Գավառի պետական համալսարանի (ԳՊՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ), Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ), Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի, Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի (ՎՊՀ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներկայացուցիչներ, գիտաշխատողներ, դասախոսներ, մանկավարժներ, ՀՀ-ից, Արցախի Հանրապետությունից, Սիրիայից, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, տարբեր բարբառների ներկայացուցիչներ: Ամեն տարվա այդ օրն անցկացվող ավանդական գիտաժողովի փոխարեն այս անգամ այլ ձևաչափ էր ընտրված՝ կազմակերպել մայրենիի լեզվաշքերթ՝ զգալու, վայելելու մեր լեզվի տարածաժամանակային դրսևորումների անկրկնելի գեղեցկությունն ու հնչեղությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վիկտոր Կասվալյանը, մասնակիցներին իր օրհնության խոսքն ասաց Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը, *ողջույնի խոսքեր ասացին ԳՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ, ի. գ. դ., պրոֆ., ՀՀ պետական տոնացույցում Մայրենի լեզվի օրը ներառելու մասին օրենսդրական նախաձեռնության*

* *Ներկայացվել է 13. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

հեղինակ Հրանուշ Հակոբյանը, ՀՀ ԿԳՄՄՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆ., բ. գ. դ. Գուրգեն Խաչատրյանը, ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, ԱրՊՀ-ի ռեկտոր, բ. գ. թ. Արմեն Սարգսյանը, ԱրՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ. Լուսինե Մարգարյանը, ԳՊՀ-ի պրոռեկտոր, ֆիզմաթ. գ. թ., դոցենտ Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոցենտ Թաթուլ Ասոյանը, պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ և ուսանողներ:

Միջոցառման նոր ձևաչափով պայմանավորված՝ ստեղծվել էր անմիջական ու անկաշկանդ մթնոլորտ, գիտական զգուշավորությունը փոխարինվել էր ազատ շփումների անկեղծությամբ, բազմատեսակ, բայց միասնական հայերենը ներկայանում էր իր տարածաժամանակային բազմազանությամբ (գրաբար, միջինհայերեն, գրական արևելահայերեն, գրական արևմտահայերեն, բարբառներ): Մասնակիցները հետաքրքիր պատմություններ էին հնչեցնում իրենց մայրենի բարբառներով ու խոսվածքներով: Հետաքրքրությամբ էին լսվում Բայազետի, Դիադինի, Մշո, Ալաշկերտի, Խոյի, Մակուի, Շիրակի, Լոռվա, Զեյթունի, Ադիյամայի, Արցախի, Արծափի, Գորիսի և այլ բարբառներով ու խոսվածքներով ներկայացվող հետաքրքրաշարժ պատմություններն ու զվարճապատումները: Հատուկ ուզում ենք շեշտել ԱրՊՀ-ի ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ համալսարանի դասախոսների և ուսանողների ակտիվ ու կազմակերպված մասնակցության փաստը: Կարևոր էր նաև այն, որ չէին անտեսվել ինչպես Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, այնպես էլ այլ ազգերի լեզուները, մասնավորապես՝ հնդկերենը, չինարենը, հունարենը, ասորերենը, ռուսերենը, քրդերենը, որոնք ներկայացվեցին Հայաստանում սովորող ուսանողների կողմից:

Հետաքրքրությունը շատ մեծ էր: Սպասված միջոցառում լինելու մասին է խոսում այն փաստը, որ 5 ժամ տևած միջոցառմանը մասնակցել ցանկացողների մեծ մասը չկարողացավ միանալ ZOOM հարթակում տեղերի սահմանափակության (100 տեղ) պատճառով:

Մասնակիցները, արտահայտելով իրենց գոհունակությունը, նշեցին, որ առաջին անգամ հայոց լեզուն ներկայացավ իր բոլոր վիճակների դրսևորումներով ու կրողներով, և ունկնդիր եղան մեր ոսկեդենիկ լեզվի ախորժալուր ու կենդանի արտասանությանը:

Միջոցառման ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկան Հրանուշ Հակոբյանը, Նելլի Կուտուզյանը, Թաթուլ Ասոյանը, Աշոտ Գալստյանը, Վիկտոր Կասովայանը՝ կարևորելով նմանատիպ միջոցառումների հաճախ կազմակերպումը՝ մեր մայրենիի հավերժության երթը շարունակելու, այն սրբորեն պահել-պահպանելու և հարատևացնելու նպատակով:

Ուրախությամբ փաստենք, որ Մայրենիի օրվան նվիրված միջոցառումը իրապես վերածվեց լեզվի տոնի:

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ